



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
Էլ.փոստ /E-mail/ эл.почта: e.pirumyan@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 58 54 19
☎ (374 10) 54 08 57

№ _____

<< >> _____ 2014 թ.

Արարատի բնապահպանական տեղեկատվական
հասարակական <<Օրիուս>> կենտրոնի
համակարգող պարոն Վ. Զիլինգարյանին

Հարգելի պարոն Զիլինգարյան

Ի պատասխան Ձեր 2014 թվականի մայիսի 27-ի թիվ AA-002 գրության, հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք 2013թ. հունիսի 13-ից օգոստոսի 13-ը ներառյալ իրականացրել են Արարատյան դաշտավայրում ջրային ռեսուրսների պահպանության փաստացի վիճակի ուսումնասիրություն, ինչի արդյունքներն աղյուսակով ներկայացնում եմ ստորև:

ՀՀ բնապահպանության նախարարությունը կարևորելով Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի ռազմավարական նշանակությունը, դրանց կառավարման խնդիրներն ու մեխանիզմները հստակեցնելու նպատակով, բազմիցս առաջարկել է վերջին տարիներին պետական բյուջեից ֆինանսավորվող տարեկան հայտային ծրագրերում ներառել Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրային պաշարների գնահատման աշխատանքները (կատարել հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ): Համաձայն ՀՀ կառավարության 26.10.09թ. N1360-Ն որոշման 2009թ. պետական բյուջեից ՀՀ բնապահպանության նախարարությանը հատկացվել է 5717.0 հազ. դրամ՝ ՀՀ Արարատյան դաշտավայրում ստորերկրյա ջրային ռեսուրսների ծավալների ճշգրտման համար անհրաժեշտ հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների իրականացման ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով:

ՀՀ բնապահպանության նախարարության <<Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է վերը նշված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, համաձայն որի ՀՀ Արարատյան դաշտավայրի ուսումնասիրությունների արժեքը գնահատվել է 259.4 մլն դրամ՝ երկու տարվա իրականացման ժամկետով:



ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ, և ՀՀ կառավարության կողմից ներկայում միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ տարվում են բանակցություններ Արարատյան դաշտավայրի ջրային ռեսուրսների պաշարների գնահատման իրականացման ֆինանսավորում հայթայթելու համար:

Հարգանքով՝



Է. Փիրումյան

Ա. Վարդանյան
523835

ԱՂՅՈՒՍԱԿ
ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

առ 13.08.13թ.

| Հ/Հ | Մարզի անվանումը | Խորքային հորերի քանակը պոմպով նշագրվում է -պ ինքնաշատրվանող նշագրվում է -ի | | | | | | |
|-----------------|-----------------|---|------------|------------|-------------------------------|--------------------------------|--------------------------------|-----------------------------------|
| | | Ընդամենը | այդ թվում՝ | | | | | |
| | | | ՋԹ-ով | առանց ՋԹ-ի | ժամկետանց ՋԹ հայտ ներկայացրած | ժամկետանց ՋԹ հայտ չներկայացրած | լուծարման ենթակա հորերի քանակը | կոնսերվացման ենթակա հորերի քանակը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Արմավիր | 257ի | 77ի | 56ի | 70ի | - | - | 54ի |
| | Ընդամենը | 1678պ | 408պ | 227պ | 142պ | 17պ | 186պ | 698պ |
| | | 1935 | 485 | 283 | 212 | 17 | 186 | 752 |
| 2 | Արարատ | 760ի | 274ի | 184ի | - | 29ի | 92ի | 181ի |
| | Ընդամենը | 619պ | 193պ | 95պ | 129պ | 31պ | 111պ | 60պ |
| | | 1379 | 467 | 279 | 129 | 60 | 203 | 241 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 1017ի | 351ի | 240ի | 70ի | 29ի | 92ի | 235ի |
| | | 2297պ | 601պ | 322պ | 271պ | 48պ | 297պ | 758պ |
| | | 3314 | 952 | 562 | 341 | 77 | 389 | 993 |

